Մկրտիչ կթղ. հրատարակած է Առաջնորդ Սրբազան Տեղեաց խորագրով գրքոյկ մը (տպ. Պոլիս. 1858)։

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԻՆՈՒՆԻ, ՊԱՐՏԻԶԱԿՑԻ.— Մբ. հայրը Պետրոս, մայրը Թագուհի, եղբայրները Թագոր և Վրթանես, քոյրը Եւպրաքսէ. ընդհանուր պատերազմին եօթանասուն և հինգամեայ մայրը և եղբայրները Պարտիզակէն տեղահանուելով ընտանեօք տարագրուեցան և ճանապարհին վախճանեցան։

Մկրտիչ եպս. Ծ. 1863ին Պարտիզակ. աշխ. տեղւոյն Ներսիսեան ազգ. վարժարանի, Եղիշէ Դուրեան վրդ.ի տեսչութեան օրով, յետոյ օգն. ուսուցիչ կրօնի և թուրքերէն լեզուի. սարկաւագութեան՝ ուսուցիչ Ատափազար և Նիկոմիդիա, Զո. 1890ին Նիկոմիդիոյ Ս. Աստուածածնին եկեղեցիին մէջ. Առ. փոխանորդ Նիկոմիդիոյ և այցելու հովիւ Պոլսի (1890—94). իբր Նիկոմիդիոյ առաջն. փոխանորդ՝ ի հիմանէ վերաշինել կուտայ Զէյնկիլէրի Ս. Մինաս եկեղեցին ժողովրդային նպաստներով. Առ. Բէօթահիոյ և Աֆիոն-Կարահիսարի (1895—1905), իր այս պաշտօնավարութեան մէջ ի հիմանէ շինել կուտայ Էսկիշէհիրի Ս. Երրորդութիւն եկեղեցին և օծումը կը կատարէ. Առ. Եգիպտոսի (1905—1912). 1910ին կը ձեռնադրուի եպս. կը հրաժարի Եգիպտոսի առաջնորդութենէն և կը վերադառնայ Պոլիս, ուր կ'անդամակցի Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովին. (1912—1914). քննիչ Պանտրմայի ընտրական գործոց. կը վարէ Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցիին քարոզչութիւնը (1914—1916)։ Ընդհ. Պատերազմի ժամանակ, 1916 ին վեց եկեղեցականներու հետ Կ. Պոլսէն ցամաքի ճամբով կը տարագրուի Ս. Յակոբի վանքը եւ հոն կը մնայ առանձնացած (1916 — 1921). Միաբանական ժողովոյ որոշմամբ կ'ընդունուի միաբան Ս. Յակոբի վանքին և կ'ընտրուի Նախագահ Վարչ. Ժողովի՝ Բրիտանական հոգատար պետութեան կառավարիչ Սթորսի պաշտօնագրովը 1921 ին, կը նախագահէ Միաբան. Ժողովի այն նիստին որ ընտրեց Երուսաղէմի պատրիարքը՝ Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Դուրեանը, որուն գահակալութեան առթիւ, Ս. Յակոբի տաճարին մէջ յանձնեց պատրիարքական Աստն և յատենի եկեղեցւոյ ուղերձով մը շնորհաւորեց նորընտիր պատրիարքը Միաբ. Ժողովի անունով. Վարչ. Ժողովի պաշտօնը վերջ գտնելով՝ կ'ընտրուի Տնօրէն Ժողովը, վանքին կանոնագրին հա-